ը նորմալ կերպով աշխատում են —40 մինչև +50° C սահմաններում շրջապատող օդի ջերմաստիճանների փոփոխությունների և մինչև 70 % օդի հարաբերական խոնավության ժամանակ։ Ապարատների նորմալ աշխատանքը չի խախտվում որևէ դիրքում տեղադրելու դեպքում։ ՊՎ3—25, ՊՎ3—60 և ՊՊ 25/4պ պակետային անջատիչներն ու փոխարկիչները դիմանում են մոտ 7000 փոխարկումների, իսկ ՊՎ3—100 տիպի անջատիչները՝ մոտ 3000 փոխարկումների։



Նկ. 4. ՊՊ25/4պ տիպի պակետային անջատիչ։



Նկ. 5. ՊՊ—3 տիպի վոլտմետրական փոխարկիչ։



Նկ. 6. ՊԿ—113 տիպի կոճակավոր գործարկիչ։

ՄԱՆԿԱԿԱՆ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐԻ ՆՈՐ ԱՍՈՐՏԻՄԵՆՏ

Լ. ԿՐԵՄԿՈՒԼ ԵՎ Մ. ԴՐԻԳՈՐԵՎԱ,
Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատ

Երեխաների համար գեղեցիկ և էժան հագուստեղենի պատրաստումը մեր թեթև արդյունաբերության խնդիրն է։

Երեխաների համար ապրանքներ թողարկող տեքստիլի, տրիկոտաժի, կոշկեղենի արդյունաբերությունները պետք է վերանայեն իրենց ասորտիմենտը, այն զգալի չափով լրացնեն, փոփոխվող դարձնեն։ Երեխաների համար վաճառվող ապրանքների բացասական կողմը նրանց մեծ քանակն է. այդ պատճառով էլ երկրի խանութները հեղեղվում են միևնույն գույնի, նախշի, ձևածքի և մոդելների ապրանքներով։

Երևանի Վ. Ի. Լենինի անվան մետաքսի կոմբինատի նկարիչները կարող են մանկական նախշեր պատրաստել երկու գործվածքի՝ մարկիզետի և պոպլինի համար, իսկ դեսսինատորները (գծագրիչները)՝ բազմազան դարձնել նրանց կազմությունը։

Մանկական ասորտիմենտի ստուգատեսին կոմբինատի նկարիչները մետրանոց գործվածք-

Նկ. 1.

ների և ձևած կտորների վրա ներկայացրել են մոտ 20 նոր նախշեր։

Հարկավոր է ուշադիր կերպով ուսումնասիրել Հայաստանի հին գործվածքներն ու ազգային կոստյումները և նրանց հիման վրա երեխաների համար մշակել ազգային բնույթի ժամանակակից հագուստեղեն։ Դրա նպատակահարմարությունը փորձով հաստատվում է մյուս ռեսպուբլիկաներում, որտեղ երեխաների և մեծահասակների



Նկ. 2.

համար ազգային տարազի մոտիվներով ստեղծվել են ամենօրյա հագուստեղենի նոր աղբյուրներ։ Մոդելներում զուգակցվում են հարթ և նախշած գործվածքները։

***

Դեսսինատորների կոլեկտիվները պետք է աշխատեն բարելավել գոյություն ունեցող մանկական ասորտիմենտը և մշակեն նոր կազմության գործվածքներ։

Մանկական ասորտիմենտի նախագծման ժամանակ պետք է մեծ ուշադրություն դարձնել հումքի ընտրության վրա, որպեսզի գործվածքը թանկ չլինի և գրավիչ տեսք ունենա։ Այդ պատճառով ամենից լավ է գործվածքը մշակել վիսկոզայից, զուգակցելով շտապելի կամ վիսկոզային մուլինի հետ։ Մանկական գործվածքները կարելի է կազմել նախշած նկարով։

Վերջին ժամանակներս մեր կոմբինատի դեսսինատորները մշակել են երկու նոր տեսակի գործվածք.



Նկ. 3.

I. մանկական գործվածք վիսկոզային մուլինից.

հենքը՝ 1. Մուլին № 60

2. Մուլին № 60/2։ Խտությունը 24 ն/սմ

թեզանը՝ 1. Ներկած վիսկոզա № 60/2 մասսայում, խտությունը 22 ն/սմ։

2. Մուլին № 60

II. մանկական գործվածք վիսկոզայից, որ զուգակցված է շտապելի հետ.

հենքը՝ խամ վիսկոզա 60 մասսայում, խտությունը 32 ն/սմ

թեզանը՝ շտապելային մանրաթել № 54/2, խտությունը՝ 24 ն/սմ։